**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԾՁԲ-20-12/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 09. 03 .2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և «Անտարես» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության գործադիր մարմնի ղեկավար Ա.Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից՝ երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 27.12.2019թ. կնքված № ԳՀԾՁԲ-20-12/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2. Կատարողն պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն Համաձայնագրով նախատեսված Այլ պոլիգրաֆիական աշխատանքի տպագրման ծառայություն, ("Հայ Զինվոր" ամսագրի հրատարակման ծառայություն) (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն № 1 Հավելվածով սահմանված ծառայությունների գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունների արդյունքները և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում: Ծառայությունների տեխնիկական բնութագիրը սահմանված է Պայմանագրով:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 43 798 800 (քառասուներեք միլիոն յոթ հարյուր իննսունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն : Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն Կատարած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ Պայմանագրի 4.2 և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները բաղկացած են 2 թերթից, հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչությունը:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Անտարես» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Մաշտոցի 50ա/1 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | ՀՀ 193032650660100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02519531 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ | Գործադիր մարմնի ղեկավար |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ |

*Հավելված N 1*
*N ԳՀԾՁԲ-20-12/1-1 պայմանագրին կից*
*N 1 Համաձայնագրի*

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | Անվանումը | Չափման միավորը | Քանակը | Կողմնորոշիչ գինը /դրամ/ | Ընդհանուր գինը /դրամ/ | Գնման ժամանակացույց |
|---|---|---|---|---|---|---|
| | Այլ պոլիգրաֆիկական աշխատանքի տպագրման ծառայություն, այդ թվում՝ | դրամ | 1 | | 43 798 800 | 2020թ. 1-4-րդ եռամսյակներ, ոչ ուշ, քան 10.12.2020թ. |
| 1 | "Հայ Ձինվոր" ամսագրի հրատարակման ծառայություն | հատ | 255 000 | 171,76 | 43 798 800 | 255 000 |

*Հավելված N 2*
*N ԳՀԾՁԲ-20-12/1-1 պայմանագրին կից*
*N 1 Համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

դրամ

| Հ/Հ | Գնման ենթակա ծառայության անվանումը | CPV կոդ | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին՝ ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 20.12.2020թ. | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Այլ պոլիգրաֆիկական աշխատանքի տպագրման ծառայություն, այդ թվում՝ "Հայ Ձինվոր" ամսագրի հրատարակման ծառայություն | 79821200/603 | 7 700 000 | 19 350 000 | 19 350 000 | 19 350 000 | 31 500 000 | 31 500 000 | 31 500 000 | 43 798 800 | 43 798 800 | 43 798 800 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Անտարես» ՍՊԸ

Գործադիր մարմնի ղեկավար

Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ